ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՎՐԱ

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Արդի հասարակական հարաբերությունները հետզհետե զարգանում և բարդանում են՝ նորովի ազդելով մարդկանց փոխհարաբերությունների և գործողությունների վրա: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն հասարակական լայն շերտերի գիտակցության վրա ազդելու առավել նուրբ հնարքներ, որոնք միշտ չէ, որ տեսանելի են և գիտակցվում են հանրության կողմից[1]: Դրանցից ամենակարևորը մանիպուլյացիան է, որը կիրառվում է հասարակական կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Մանիպուլյացիան վարքը կառավարելու հնարք է մարդու գիտակցության և հոգեկան աշխարհի վրա նպատակաուղղված ազդեցություն գործելու միջոցով[2]: Մարդը՝ որպես հասարակական էակ, այլոց հետ մշտապես փոխգործողությունների մեջ է, որի ընթացքում կարող է բախվել մանիպուլյացիոն երևույթների: Հասարակական գիտակցության մանիպուլյացիան՝ որպես գիտական կատեգորիա, ի հայտ է եկել 20-րդ դարի երկրորդ կեսին, սակայն այս երևույթը առկա է եղել բոլոր ժամանակներում: Օրինակ՝ Պլատոնը մանիպուլյացիան համարում էր դիմացինին մտքեր ներշնչելու, ինչպես նաև առանց հարկադրանքի կոնկրետ գործողությունների մղելու լավագույն միջոց. «*…Համոզելու արվեստը նշանակալիորեն տարբերվում է մյուս արվեստներից, քանի որ այն ստիպում է կամավոր, այլ ոչ թե ստիպողաբար ստրկորեն ծառայեցնել քեզ…*»[3]:

Վերածննդի դարաշրջանում մարդկանց մանիպուլյացիան համարվում էր քաղաքականության իրականացման կարևոր գործիք: Հենց այս ժամանակներից ի վեր մանիպուլյացիան սկսեց նույնականացվել մաքիավելականությանը: Վերջինիս ծագումը կապված է Նիկոլո Մաքիավելու «Տիրակալը» աշխատության հետ, որտեղ հեղինակը պնդում էր, որ մարդկանց արդյունավետ կառավարելու համար տիրակալին թույլատրվում է օգտագործել ցանկացած միջոց: Քաղաքական շահերի իրականացման համար, ըստ Մաքիավելու, ցանկացած միջոց, նույ-

[1] Տե՛ս **Louis de Saussure, Peter Schulz,** Manipulation and Ideologies in the Twentieth Century: Discourse, Language, Mind, Amsterdam, «John Benjamins Publishing Company», 2005, էջ 15-30:

[2] Տե՛ս **Է. Քալանթարյան,** Մանիպուլյացիոն մեթոդները կառավարման համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 2(20), 2016, էջ 68-72:

[3] **Платон.** Диалоги. М., 2008, էջ 75:

նիսկ ոչ բարոյական, ընդունելի է, քանի որ «...նպատակն արդարացնում է միջոցները»[4]:

Մանիպուլյացիան՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, առավել խորը ուսումնասիրել է ռուս հայտնի սոցիոլոգ Ս. Կարա-Մուրզան: Ըստ նրա՝ մանիպուլյացիան հոգևոր, հոգեբանական ազդեցության ձև է, այլ ոչ թե ֆիզիկական բռնություն կամ դրա սպառնալիք: Մանիպուլյացիա կիրառողի թիրախում է մարդ–անհատի հոգեբանական վիճակը: Այն թաքնված ազդեցություն է, որը մանիպուլյացիա կիրառողը չպետք է բացահայտի: Եթե դա բացահայտվում է, գործողությունը չի իրականանում: Իսկ բացահայտվելու դեպքում չպետք է թույլ տալ, որ պարզ դառնա դրա հիմքում ընկած խորքային նպատակը[5]: Ուստի կարող ենք ասել, որ նա, ում ուղղված է մանիպուլյացիոն ազդեցությունը, կարող է ընկալվել որպես մանիպուլյացիայի օբյեկտ և ոչ թե հաղորդակցային երկխոսության լիիրավ մասնակից: Մեկ այլ ռուս հեղինակ Վ. Պուգաչովի կարծիքով, «*Մանիպուլյացիան մարդկանց վարքի և հոգեբանության թաքնված կառավարում է՝ ստիպելու մարդկանց գործելու (կամ հակառակը) իրենց այդ պահի մտադրությունից անկախ*»[6]: Նա մարդուն կառավարելու երկու հիմնական ձև է առաջարկում՝ տեսանելի և թաքնված: Եթե կառավարումն ունի տեսանելի բնույթ, ապա նպատակները ներկայացվում և իրականացվում են հրապարակայնորեն: Թաքնված կառավարման դեպքում դրանք չեն բացահայտվում: Այս կամ այն ձևի գերակշռումը, ըստ հետազոտողի, կախված է մի քանի պատճառներից. «*...առավելապես կառավարողների և կառավարվողների շահերի անհամապատասխանության աստիճանից, հանրության քաղաքակրթվածության մակարդակից, կառավարող էլիտայի ունակությունից և հնարավորությունից՝ օգտագործելու զանգվածի վրա թաքնված ճնշման տարբեր միջոցներ*»[7]: Բացի այդ՝ Պուգաչովը նշում է, որ մանիպուլյացիոն տեխնոլոգիաների կիրառման ծավալները, մարդկության զարգացմանը զուգընթաց, ընդլայնվում են: Դրա պատճառը հետազոտողը համարում է առաջին հերթին հանրության մեջ կոնֆլիկտային պոտենցիալի ավելացումը՝ որպես սոցիալական անհավասարության արդյունք և հետևանք: Նա առանձնացնում է հոգեբանական (մարդու վրա հոգեբանական անուղղակի ճնշում) և էկոլոգիական կամ իրավիճակային (շրջապատի կամ իրավիճակի միջոցով ճնշում) մանիպուլյացիաները: Ժամանակակից գրականության մեջ մանիպուլյացիան վարքը կառավարելու ունակությունն է՝ մարդու գիտակցության և հոգեկան աշխարհի վրա նպատակաուղղված ազդեցություն գործելով:

---

[4] **Скирбекк Г.** История философии. М., 2003, с. 284.
[5] Տե՛ս **Кара-Мурза С. Г.** Манипуляция сознанием. М., 2000, էջ 12:
[6] **Пугачев В. П**. Введение в политологию. М., 2010, էջ 93:
[7] Նույն տեղում., էջ 66:

Մանիպուլյացիան իշխանություն իրականացնելու, գործադրելու տեխնոլոգիա է: Ցանկացած քաղաքական մանիպուլյացիայի հիմնական նպատակը իշխանության հասնելն ու այն պահպանելն է: Իշխանությունը կարելի է դիտարկել նեղ և լայն իմաստով: Նեղ իմաստով այն ղեկավարման և ենթակայության՝ սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններ են, որոնք լինում են կամավոր կամ հարկադրական: Լայն իմաստով մանիպուլյացիան ուղղված է հասարակական կարգի կայունության և համակարգի սոցիալ-մշակութային նույնականության ապահովմանը:

Այսօր հասարակական կյանքի կանոնակարգումը և ինտեգրումը քաղաքական իշխանության կարևոր գործառույթներից են, որոնց իրականացումը կախված է քաղաքական կառույցների՝ զանգվածի գիտակցության և հոգեբանության վրա ազդելու հնարավորությունից: Հիմնական նպատակը քաղաքական որոշումներն արդարացնելն է և հանրության միջոցով դրանք իրականացնելը: Դրա համար պահանջվում է հոգեբանորեն և գաղափարապես մշտապես ազդել հանրության կարծիքի և գիտակցության վրա: Խելամիտ քաղաքական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հասկանալ, թե ինչ է հասարակական կարծիքը, ինչ գործոնների ազդեցությամբ է այն ձևավորվում և այլն: Հասարակական կարծիքը որևէ երևույթի կամ հիմնախնդրի վերաբերյալ հասարակության անդամների մեծամասնության վերաբերմունքն ու գնահատականն է: 19-րդ դարի ֆրանսիացի սոցիոլոգ Ժան Գ. Թարդը, ուսումնասիրելով զանգվածային օրաթերթերի և շաբաթաթերթերի ազդեցությունը հասարակական կարծիքի վրա, ընդգծել է դրանց ամենակարևոր գործառույթը՝ ինտեգրումն ու սոցիալական հսկողությունը[8]: Զանգվածային թերթերի ի հայտ գալը հասարակության մեջ պայմանավորեց մի նոր սոցիալական սուբյեկտի՝ հանրույթի ձևավորումը (հանրույթը քաղաքացիների այնպիսի համախումբ է, որոնք կապված են ընդհանուր տեղեկատվությամբ և կարծիքներով)[9]: Թերթերի ազդեցությամբ ձևավորված սոցիալական հանրույթը ծնունդ տվեց այնպիսի կազմակերպված խմբերի, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները և շարժումները, ազգային և կրոնական կազմակերպությունները, ՀԿ-ները և այլն: Հասարակական կարծիքի կառավարումը բավականին բարդ է: Որոշ դեպքերում քաղաքական գործիչներն ուղղակի դիմում են ժողովրդին և փորձում նրան գաղափարապես համոզել ինչ-որ բան անելու: Հասարակական ճգնաժամերի ընթացքում շատ հաճախ քաղաքական ղեկավարող ուժերը հրաժարվում են մարդկանց համոզելու մեթոդներից և դիմում են մանիպուլյացիայի՝ քաղաքացիների գիտակ-

---

[8] Տե՛ս **Tarde G**. On Communication and Social Influence. Chicago, «University of Chicago press», 2011, էջ 299:

[9] Տե՛ս **Евгеньева Т. В.** Технологии социальных манипуляций и методы противодействия им. СПб., 2007, էջ 33:

ցության և վարքի գաղտնի կառավարման՝ ստիպելով նրանց երբեմն գործել իրենց շահերին հակառակ:

Պետական մակարդակով իրականացվող հասարակական կարծիքի մանիպուլյացիան հիմնվում է այն բանի վրա, որ հանրային գիտակցության մեջ հետևողականորեն «ներմուծվում» են սոցիալ-քաղաքական միֆեր, գաղափարներ, նորմեր, արժեքներ, որոնք պետք է ընդունվեն անվերապահորեն[10]: Քաղաքական գործիչները օգտագործում են հանրային հոգեբանության հետևյալ մանիպուլյացիաները.

1. Հանրային գիտակցությունը ունի հասարակական-քաղաքական իրականության վերաբերյալ համարժեք և ոչ այնքան համարժեք մոտեցումներ: Մի կողմից մշակույթի զարգացումը, կրթությունը, տեղեկացվածությունը նպաստում են մարդկանց ռացիոնալության բարձրացմանը, մյուս կողմից՝ հասարակական կյանքի բարդացումը խանգարում է մարդուն՝ ստեղծելու հանրային իրողությունների և խնդիրների համակարգված պատկեր, սակայն երբ մարդիկ հասարակական-քաղաքական իրականությունը ճիշտ չեն ընկալում, քաղաքական դերակատարը, այդ հանգամանքից օգտվելով, կարողանում է մանիպուլացնել հանրությունը:

2. Հանրային գիտակցությունը բնութագրվում է իրականությունը ընկալելու դոգմաներով, որոնց վրա հիմնվելով էլ ղեկավարները փորձում են ամրապնդել իրենց իշխանությունը: Նրանք հանրության շրջանում ստեղծում են որոշակի կարծրատիպեր և դրանց վրա հիմնվելով՝ մանիպուլյացիայի ենթարկում հասարակությունը: Այս ձևն առավել բնորոշ է տոտալիտար և ավտորիտար ռեժիմներ ունեցող պետություններին:

3. Հանրային գիտակցության մեջ սովորույթների, ավանդույթների և նորարությունների համակցումը մանիպուլյացիայի համար լայն հնարավորություններ է ստեղծում և ամրապնդում է քաղաքական իշխանությունը: Բայց քաղաքական մանիպուլյացիայի համար առավել կարևոր են միֆերը: Օրինակ՝ նախկին Խորհրդային Միությունում իշխանությունը կիրառում էր միֆեր կապիտալիստական համակարգի անխուսափելի փլուզման և կոմունիզմի՝ որպես աշխատավոր դասակարգի իշխող դերի մասին և այլն:

Արևմտյան կառավարող էլիտան օգտագործում է միֆեր, որոնք վերաբերում են՝

– քաղաքացիների անհատական ազատությանը և ընտրությանը,
– քաղաքական կարևոր ինստիտուտների չեզոքությանը (կոնգրես, նախագահի իշխանություն և այլն),
– մարդու անփոփոխ էությանը,
– հասարակության մեջ կոնֆլիկտների բացակայությանը,

[10] Տե՛ս **Bottici Chiara.** A Philosophy of Political Myth, New York, «Cambridge», 2007, էջ 17-40:

– ԶԼՄ-ի բազմակարծությանը և այլն[11]:

Ամերիկացի հայտնի մեդիաքննադատ, սոցիոլոգ Հ. Ի. Շիլլերը հասարակության կարծիքի կառավարման համար առանձնացնում էր մի քանի միֆեր:

1. Անհատականության և ազատ ընտրության միֆ. ազատությունը ոչ թե խմբային է, այլ անհատական, և անկախ միտքը չի կարող կառավարվել, անհատի ընտրության ազատությունը անխախտելի է, իսկ մասնավոր սեփականության իրավունքը անհատականության և ազատության վերջնական դրսևորումն է: Ժամանակակից հասարակությունում կառավարողները այս միֆի հիման վրա արդարացնում են իրենց գործունեությունը, որքան էլ որ այն չհամապատասխանի վերը նշված սկզբունքներին:

2. Չեզոքության սկզբունք. այս միֆն անմիջապես բխում է առաջին սկզբունքից. եթե միտքը անկախ է և ազատ մանիպուլյացիայից, ապա սոցիալական ինստիտուտները, եթե հնարավորություն էլ ունենան, չեն համարձակվի խաբել մարդկանց: Եթե մարդու միտքը անկախ է և հետևում է կառավարության աշխատանքին, ապա նա պետք է փակ լինի դրսից ներմուծվող բոլոր տեսակի կարծիքների նկատմամբ, հետևաբար քարոզչությունը ոչ ոքի չի հիմարացնի: Այս դեպքում տարատեսակ մտքերը և կարծիքները, որոնք մարգինալացվում են լրատվամիջոցներով, կընկալվեն անիմաստ և ոչ պետական[12]:

3. Մարդու անփոփոխ էության մասին միֆը. առկա սոցիալական իրավիճակը որոշ բնական գործընթացների արդյունք է և վեր է մարդկային միջամտությունից: Այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ագրեսիան, ագահությունը, աղքատությունը, պատերազմները, բնութագրվում են մարդու անփոփոխ էությամբ: Սոցիալական փոփոխությունների հնարավորությունը գրեթե բացակայում է: Այս միֆը կառավարությանը հնարավորություն է տալիս իրականացնելու պասիվ սոցիալական քաղաքականություն:

4. ԶԼՄ-ի բազմակարծության միֆ, որը սխալ պատկերացում է տալիս այն մասին, որ եթե տարատեսակ լրատվական միջոցները ավելանում են, ապա երաշխավորվում է տեղեկատվական բազմազանությունը և մրցակցային կարծիքների առկայությունը: Այս առիթով Շիլլերը գրում է. «*...փաստ է, որ բնակչության շատ փոքր, ընտրյալ խումբն է, որ գիտի՝ ինչ է փնտրում և առկա տեղեկատվական հոսքերից որին է նախապատվություն տալիս: Ամերիկացիների մեծամասնությունը անգիտակցաբար ընկնում է պարտադրված տեղեկատվական ծուղակի մեջ…*» [13]:

Գիտակցության մանիպուլյացիայի հիմնական նպատակը անհա-

---

[11] Տե՛ս **Schiller H. I.** The Mind Managers edited by Richard Maxwell, Lanham, «Rowman and Littlefield Publishers», 2003, էջ 52-54:

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 53:

[13] Նույն տեղում, էջ 19:

տի պասիվությունն ապահովելն է: Միֆերը ստեղծվում են այն ժամանակ, երբ ֆիզիկական բռնությամբ հնարավոր չէ լուծել հիմնախնդիրը: Վերջիններիս միջոցով հնարավոր է դառնում ապահովել հասարակական տրամադրությունների հարաբերական կայունություն: Գլխավորը ոչ թե միֆ ստեղծելն է, այլ այն աննկատ ներմուծելը մարդկանց գիտակցության մեջ, որպեսզի նրանք չգիտակցեն, որ տեղի է ունենում մանիպուլյացիա: Քաղաքական միֆերը ի սկզբանե նպատակ չունեն թույլատրել կամ արգելել ինչ-որ գործողություններ: Դրանք սկզբում փոխում են մարդկանց կարծիքները, որպեսզի հետագայում հնարավոր լինի կանոնակարգել և հսկել նրանց գործունեությունը: Անհատը առանց որևէ լուրջ դիմադրության ընդունում է այդ միֆերի ազդեցությունը:

Քաղաքական միֆերին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

– միֆերը ի հայտ չեն գալիս պատահաբար, այլ ստեղծվում են գիտակցաբար և նպատակամղված,

– միֆերի հիմքում դրվում են քաղաքական գործիչների կոլեկտիվ ձգտումներն ու հույսերը, որոնք իրացվում են հանրության միջոցով,

– միֆերում երկու տարբեր երևույթներ են կապակցվում՝ ողջամիտ հաշվենկատությունը և մոլեռանդ հավատը, որը թույլ է տալիս քաղաքական գործիչներին իրենց ազատել բարոյականության բեռից,

– միֆերը անուղղակիորեն կապված են քաղաքական իրականության հետ, նրանք կոչված են արդարացնելու այս կամ այն իրադարձությունը, ապահովելու քաղաքացիների վստահությունը քաղաքական գործընթացների նկատմամբ[14]:

Քաղաքական միֆերը սոցիալական կառավարման անբաժանելի տարրեր են, դրանք ստեղծվում և պահպանվում են ղեկավարող շրջանակների կողմից, որոնք էլ դրանք ծառայեցնում են իրենց իշխանությունը ամրապնդելուն:

Պետական և քաղաքական շատ գործիչներ չեն խորշում բացեիբաց խաբելուց, օգտագործում են այսպես կոչված մեծ սուտը, որն այնքան է կրկնվում, մինչև ընդունվում է որպես ճշմարտություն: Ժողովրդավարական հասարակությունում, գիտակից և իրազեկ մարդկանց միջավայրում փաստացի սուտը «չի աշխատում», այդ պատճառով օգտագործվում է «մասնակի» սուտը, որը քողարկում է այն, ինչը կարող է մեծ խառնաշփոթ առաջացնել: Մյուս մեթոդը ճշմարտանման սուտն է, որի դեպքում հավաստի փաստերի զուգակցմամբ քողարկվում է սուտը: Հաջորդը գովաբանվող սուտն է, երբ մարդկանց տրվում են անիրականանալի, սակայն ցանկալի և չափազանցված խոստումներ: Այս մեթոդը տարածված է հատկապես ընտրությունների ժամանակ: Կիրառվում է նաև մասնակի ճշմարտությունը. հաճախ հրապարակվում է «բացար-

[14] Տե՛ս **Флад К.** Политический миф: теоретическое исследование. М., 2004, էջ 40-41:

ձակ ճշմարտությունը», այսպես կոչված՝ դառը ճշմարտությունը: Այդպիսի ճշմարտության ընդունումը ուղեկցվում է արդարացումներով, որոնք ազդում են մարդկանց հոգեբանության վրա:

Բացի այդ՝ մանիպուլյացիա իրականացնելիս հատուկ ուշադրություն է տրվում արժեքային ենթակայությանը: Սա արտահայտվում է հետևյալ կերպ. որոշակի պայմաններից ելնելով՝ քաղաքական գործիչները առաջ են քաշում «պրագմատիկ» կամ «հումանիստական» գաղափարներ և արժեքներ, ինչպես օրինակ՝ ազատություն, հավասարություն, արդարություն, հայրենասիրություն, խաղաղություն և այլն:

Մանիպուլյացիոն կառավարումը ենթադրում է հարկադրանքի ձևերի քողարկում: Օրինակ՝ տոտալիտար վարչակարգերը լայնորեն օգտագործել են ահաբեկչական գործողություններ սեփական ժողովրդի նկատմամբ, այնուհետև նրանք ստիպված են եղել արդարացնել և քողարկել դրանք: Ուսումնասիրելով ժամանակակից հասարակության գիտակցության վրա մանիպուլյացիոն կառավարման ազդեցությունը՝ համոզվում ենք, որ դրանք իրականացվում են բազմաթիվ ձևերով և մեթոդներով: Դրանցից կարելի է առանձնացնել երկու գլխավոր մոդելներ՝ հոգեբանական և ռացիոնալ: Հոգեբանական մոդելի էությունը ենթադրում է համապատասխան խթանների ընտրություն, որոնց գործարկման դեպքում հոգեբանական ընթացակարգերը առաջ կբերեն այնպիսի արձագանք, որն անհրաժեշտ է մանիպուլյացիա իրականացնողին: Ռացիոնալ մոդելի պարագայում մանիպուլյացիան իրականացվում է ոչ թե հոգեբանական մոտիվների օգտագործմամբ, այլ խաբելու միջոցով՝ առաջին պլան մղելով անհատի շահերը: Այս մոդելին բնորոշ առանձնահատկություններն են.

– շարքային քաղաքացուն հասանելի տեղեկատվության սահմանափակում,

– քարոզարշավների անցկացում, որի դեպքում մարդկանց ներկայացվում է հուսալի, բայց կողմնակալ տեղեկատվություն,

– գաղտնիության օգտագործում, այսինքն՝ այնպիսի տեղեկատվության միտումնավոր քողարկում, որը կարող է փոխել ողջ քաղաքական կուրսը,

– տեղեկատվական ծանրաբեռնում, երբ մարդկանց միտումնավոր ներկայացվում է մեծ, ավելորդ ծավալի տեղեկատվություն՝ նպատակ ունենալով քաղաքացուն զրկել տեղեկատվությունը համարժեք ընկալելու և գնահատելու հնարավորությունից, քանի որ նա տեղեկատվություն ստանալու այլ հնարավորություն չունի և ստիպված է բավարարվել դրա պաշտոնական մեկնաբանմամբ[15]:

Հասարակական կարծիքի վրա մանիպուլյացիոն գործոնների նշանակալի ազդեցությունը կարևորել է նաև քաղաքական քարոզար-

[15] Տե՛ս **Амелин В. Н.** Социология политики. М., 1992, էջ 61:

շավի վերլուծության ամերիկյան ինստիտուտը (IPA): Ինստիտուտի մասնագետների կարծիքով՝ այդ գործոնները պայմանավորված են հետևյալ հնարքներով.

- «պիտակավորում» - անհատին կամ գաղափարը որակել նվաստացուցիչ, վիրավորական կամ ծաղրական ածականներով՝ վնասելով նրանց հեղինակությունը,
- «երաշխավորում» - երբ քաղաքական թեկնածուի վարկանիշը բարձրացնելու նպատակով նրա օգտին հանդես են գալիս հանրության շրջանում մեծ հարգանք և հեղինակություն վայելող անձինք,
- «փոխառում» - երբ քաղաքական դերակատարին կամ գաղափարին վերագրում են այնպիսի հատկություններ և հատկանիշներ, որոնք նույնացվում են այլ անհատների և գաղափարների հետ,
- «հասարակ մարդիկ» - քարոզչություն իրականացնողի շահերի նույնացում հասարակ մարդկանց շահերի և ձգտումների հետ, որոնք համարվում են հանրության մեծամասնություն կազմող պասիվ դերակատարներ,
- «խաղաքարտերի կեղծում» - երբ իրական փաստերը բացահայտորեն խեղաթյուրվում են, սակայն այնպիսի հնարքներով, որոնք հանրությունը չի նկատում,
- «ընդհանուր խցիկ (վագոն)» - երբ մարդկանց ներշնչում են, որ քարոզչությունն ընդունվում է բոլորի կողմից, «բոլորն այդպես են մտածում, ուրեմն դա ճիշտ է»[16]:

Որպես քաղաքական մանիպուլյացիայի օրինակ կարելի է նշել հետևյալը. 1990-ական թթ., Սադամ Հուսեինի ռեժիմի օրոք Իրաքի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները երկրի օրակարգային հարցն էր: Բնակչությունը «հեսսար»-ի (էմբարգոյի) համար մեղադրում էր ոչ թե Ս. Հուսեինի վարչակարգին, այլ Ամերիկայի Միացյալ Նահանգներին, «որը ցանկանում էր նվաճել Իրաքի ազատասեր բնակչությանը»[17]: Այս դեպքում կիրառվել է քաղաքական մանիպուլյացիայի հին, բայց արդյունավետ եղանակը, այն է՝ «թշնամու կերպարի» ստեղծումը:

Մանիպուլյացիայի ազդեցությունը հասարակական գիտակցության վրա դժվար բացահայտվող երևույթ է և շատ դեպքերում ապացուցման ենթակա չէ, քանի որ այն իրականացնողը կարող է ասել, որ գործել է դիմացինի շահերից ելնելով, չի ունեցել չար մտադրություններ: Հենց դա է այդ երևույթի դեմ պայքարելու դժվարությունը[18]: Մանիպուլյացիոն կառավարումը ներառում է և՛ միջանձնային, և՛ զանգվածային մանիպուլյացիայի տեսակները: Առաջինի դեպքում մանիպուլյացիա իրականացնողը դիմում է այնպիսի հնարների, որոնք գործում են մի-

---

[16] Տե՛ս **IPA Propaganda history;** changing minds and persuasion, http://changingminds.org/techniques/propaganda/propaganda_history.htm

[17] **Апдайк Р. Дж** . Саддам Хусейн. Ростов-на-Дону, 1999, с. 495.

[18] Տե՛ս **Цуладзе А. М.** Политические манипуляции, или Покорение толпы. М., 1999, էջ 17:

ջանձնային մակարդակում: Երկրորդի դեպքում արդեն կիրառվում են քաղաքական մանիպուլյացիոն տեխնոլոգիաները: Միջանձնային հաղորդակցությունը զանգվածայինից տարբերվում է նրանով, որ «անհատական շփման ընթացքում ըմբռնման էֆեկտը ավելի ուժեղանում է խոսողի ձայնի հնչողության, միմիկաների, ժեստերի հաշվին, որոնք բացառապես ուղղված են զրուցակցին»[19]: Մանիպուլյացիոն գործոնների կիրառումը ուսումնասիրելիս հարկ է նաև անդրադառնալ այդ հնարներն օգտագործող սուբյեկտի անձնային հատկանիշներին: Օրինակ՝ Է. Շոսթրոմը պնդում էր, որ մանիպուլյացիայից միայն օբյեկտը չի տուժում, այլ նաև այն կիրառող սուբյեկտը: Նա գտնում էր, որ «մանիպուլյացիան կյանքի կեղծ փիլիսոփայությունն է, որը միտված է շահագործելու և վերահսկելու ինչպես ինքդ քեզ, այնպես էլ ուրիշներին»[20]:

Մանիպուլյացիոն կառավարման ուսումնասիրությամբ զբաղվող տարբեր հեղինակներ հաճախ են անդրադառնում ֆաշիստական Գերմանիայի առաջնորդ Հիտլերի կերպարին: Է. Ֆրոմը, վերլուծելով Հիտլերի կերպարը, փորձել է բացահայտել նրա հայացքի գաղտնիքը: Նա նշում է, որ Հիտլերի հայացքը սառն էր, նրան հատուկ չէին ջերմ զգացմունքները: Բնավորության այդ գիծը շատերին էր վանում, սակայն հնարավոր է՝ դրա մեջ ձգողական ուժ կար: Սառնություն արտահայտող դեմքը մարդկանց շրջանում առաջացնում էր վախ, սակայն այդ վախը շատերի մոտ միախառնվում էր հիացմունքի հետ՝ վերջիններին ենթարկեցնելով իր կամքին[21]:

Ինչպես տեսանք, հասարակական կարծիքի ձևավորման և առհասարակ կառավարման համակարգում մանիպուլյացոն գործոնների ազդեցությունը հսկայական է: Նախ և առաջ կարելի է ասել, որ՝

– մանիպուլյացիան անհամաչափ գործընթաց է, հարաբերության տեսակ, որի մի կողմում սուբյեկտն է, մյուս կողմում՝ օբյեկտը, այն անձը, ում վրա ներգործում են: Ընդ որում՝ անձինք, որոնց գիտակցության վրա ազդեցություն են գործում, ավելի շատ ընկալվում են որպես առարկա, օբյեկտ, քան անհատ,

– մանիպուլյացիան հոգեբանական ազդեցության ձև է, քանի որ այն իրականացնողի թիրախը անհատի հոգեկերտվածքն է,

– մանիպուլյացիան թաքուն ներգործություն է, ուստի չպետք է բացահայտվի օբյեկտի կողմից,

– մանիպուլյացիա կիրառելու համար պահանջվում են գիտելիքներ և վարպետություն: Եթե խոսքը քաղաքականության մեջ կիրառվող մանիպուլյացիայի մասին է, ապա գործընթացի մեջ ներգրավվում են ոլորտի մասնագետներ:

---

[19] **Зверинцев А. Б.** Коммуникационный менеджмент. Рабочая книга менеджера PR. СПб., 1997, с. 173.

[20] **Шостром Э.** Анти-Карнеги, или Человек-манипулятор. Минск, 1992, с. 28.

[21] Տե՛ս **Фромм Э.** Анатомия человеческой деструктивности. М., 2007, էջ 356-357:

Գիտակցության մանիպուլյացիան տեղեկատվական ազդեցության եղանակ է: Մանիպուլյացիա իրականացնողը հաղորդագրությունների միջոցով ազդում է օբյեկտի գիտակցության վրա, ստեղծում իր համար ցանկալի պատկերացումներ: Մանիպուլյացիան իրականացվում է երեք ոլորտներում՝ գաղափարական (քարոզչություն), տնտեսական (գովազդ), սոցիալական:

Վերջին տարիներին տարածում է գտել զանգվածային գիտակցության մանիպուլյացիան, որի իրականացման հիմնական գործիք են զանգվածային լրատվամիջոցները, էլեկտրոնային և սոցիալական մամուլը, համացանցը: Հանրության վրա թաքնված ազդեցության գործառույթը իշխանությունը իրականացնում է հիմնականում ԶԼՄ-ի միջոցով: Վերլուծելով ԶԼՄ-ի դերը ժամանակակից հասարակության կյանքում՝ կարող ենք ասել, որ դրանք՝ որպես հասարակական կարծիք ձևավորողներ, տիրապետում են անհատի և հասարակության գիտակցության վրա ազդեցության գործուն միջոցների: Զանգվածային հաղորդակցության միջոցները գաղափարներ, տեսակետներ արտահայտելու և փոխանակելու կարևոր հարթակ են, և հնարավորություն են տալիս իշխանության գործունեությունը դարձնել առավել թափանցիկ, ինչպես նաև նպաստում են քաղաքացիական հասարակության զարգացմանը և ապահովում քաղաքական գիտակցության բարձր մակարդակ: ԶԼՄ-ի հիմնական խնդիրն է հասարակությունը վերածել մի ամբողջական զանգվածի, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կառավարելու նրա վարքը և ձևավորելու իշխանության հանդեպ նպաստավոր կամ ոչ նպաստավոր տրամադրություններ: Սակայն, նշված առավելությունների հետ մեկտեղ, դրանք հանրության վրա ազդելու գործիք են դարձել, որոնք ուռճացնում են տեղեկատվությունը և տեղեկատվական մանիպուլյացիա իրականացնում: Մեր հանրապետությունում այսօր դա լրջագույն խնդիր է, քանի որ առկա է մեդիագրագիտության պակաս, որի հետևանքով անհատը դառնում է բավական խոցելի տեղեկատվական մանիպուլյացիայի նկատմամբ: Անհրաժեշտ է զարգացնել քաղաքական բանավեճերի պրակտիկան, որը հնարավորություն կտա պաշտպանվելու մանիպուլյացիոն վտանգներից, կատարելու գիտակցված ընտրություն, օբյեկտիվ պատկերացում կազմելու հասարակության մեջ ցանկացած երևույթի վերաբերյալ:

Բանալի բառեր – *հասարակական կարծիք, մանիպուլյացիոն կառավարում, քաղաքական հանրույթ, հասարակություն, քաղաքական միֆեր, գիտակցության մանիպուլյացիա, հանրային գիտակցություն, քաղաքական մանիպուլյացիա*

ЭДГАР КАЛАНТАРЯН – *Влияние манипулятивного управления на общественное мнение.* – Среди наиболее важных функций политической власти выделяются регулирование и интеграция современного общества. Они зависят от влияния, которое политические структуры оказывают на массовое сознание и психологию общества с целью легитимации государственных решений. Давление

на массовое сознание и общественное мнение, сопровождаемое психологическим и идеологическим влиянием, постоянно растёт. Существует множество «мягких мер», влияющих – часто скрытым образом – на широкие слои населения. Это и есть манипуляция. Эффективные манипулятивные механизмы постепенно превращаются в социально-политическую реальность, оказывающую воздействие на все сферы общественной деятельности.

Ключевые слова: *общественное мнение, управление манипуляциями, политическое общество, политические мифы, манипуляция сознанием, общественное сознание, политическая манипуляция*

EDGAR KALANTARYAN – *The Impact of Manipulative Governance on Public Opinion*. – The regulation and integration of modern society are the most important among the functions of political power. Their implementation depends on the regular and successful influence of political structures on the mass consciousness and psychology having a purpose to legitimate all decisions in the public sector. Thus, constantly growing pressure on mass consciousness and public opinion accompanied by psychological and ideological influence. According to research, today there are plenty of ways or "soft measures" to influence the wide groups of public and these are usually latent. This phenomenon is manipulation. Manipulation has many ways of influencing the public opinion and their use implies considerable success for those who apply to them. Consequently, it transforms into a socio-political reality making an influence on all areas of social activities.

Kew words: *social opinion, manipulative governance, political community, society, political myths, the manipulation of human consciousness, public self-consciousness, political manipulation*